Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

ԴՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ — «Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1000, 252 էջ, գինը՝ 1 ռ.

Զտնարկելով հայ ժողովրդական վիպերգերի և պատմական երգային բանահյուսության ուսումնասիրությանը, հեղինակը իր առջև խնդիր է դրել այն քննարկել բազմակողմանիորեն և հրատարակել չորս գրքով, որոնցից առաջինը վերաբերվելու է հին շրջանի վիպերգերին ու պատմական երգային բանահյուսությանը, երկրորդը՝ միջնադարյանին, երրորդը՝ նոր ժամանակներին, իսկ չորրորդը՝ սովետական շրջանին։

Հանդամանքների բերումով նախ շարադրվել և լույս է տեսել վերջին գիրքը՝ «Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը», որի առաջին մասի առաջին երեք գլուխներում տրվում է սովետահայ բանահյուսության առանձնահատկությունները, վիպերգերի ժանրային բնութագիրը և նրանց սյուժեների համառոտ շարադրանքը։ Հաջորդ գլուխներում վերլուծվում են սովետահայ վիպերգերի և պատմական երգային բանահյուսության գաղափարական բովանդակությունն ու կերպարները։ Գրքի երկրորդ մասը նվիրված է վիպական երգերի գեղարվեստական առանձնահատկությունների քննությանը և նրանց պոետիկային։

ՈՒՎԱԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ — «Զապել Եսայան», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1000, 295 էջ, գինը՝ 70 կ.

Այս գրքում առաջին անգամ փորձ է արվում ներկայացնելու Զապել Եսայանի գրական ժառանգությունը արձակը, տեսական-գեղագիտական հոդվածները, հրապարակախոսությունը։

Զգալի տեղ է հատկացված նաև Եսայանի հասարակական գործունեությանը, գրական կապերին ու առնչություններին։

Շ. Խ. ՄՀՈՅԻ — «Քրդական ազգային-ազատագրական շարժումները Իրաքում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1000, 178 էջ, գինը՝ 46 կ.

Աշխատությունում լուսաբանվում է Իրաքում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած քրդական ազգային-ազատագրական շարժումները, նրանց տեղը և դերը Իրաքի ժողովրդի ընդհանուր հակաիմպերիալիստական պայքարի մեջ։